ԴԵՐԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ. ԻՆՉ ԱԿՆԿԱԼԵԼ

DOI: 10.52174/2579-2989_2023.4-79

Հիմնաբառեր. *գերիշխանություն, միջազգային առևտուր, վերաբաշխում, առևտրատնտեսական համագործակցություն, դերակատար*

Նարինե ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2021 թվականին գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ, ապա մագիստրատուրան՝ «Մակրոտնտեսական վերլուծություն» կրթական ծրագրով:

2020 թվականից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական խմբերի անդամ-փորձագետ է: Աշխատում է ՀՀ Ֆինանսների նախարարությունում՝ որպես մակրոտնտեսագետ:

Հեղինակ և համահեղինակ է շուրջ 3 տասնյակ գիտական հրապարակումների և 4 կոլեկտիվ մենագրության:

https://orcid.org/0000-0003- 0272-5868

Գերիշխող դիրքի համար համաշխարհային տնտեսական «հսկաների» միջև ընթացող պայքարը շարունակում է ընդլայնել իր ընդգրկման շրջանակը՝ արտահայտվելով նաև որոշակի երկրների և տարածաշրջանների նկատմամբ վերահսկողություն ձեռք բերելու հավակնոտ նկրտումներով: 2022 թվականից սկսած՝ ռուս-ուկրաինական հակամարտության սրման համապատկերում, զգալիորեն աճել է հետաքրքրությունը Կենտրոնական Ասիայի հանդեպ: Միայն վերջին վեց ամսվա ընթացքում տարածաշրջանի երկրների մասնակցությամբ տեղի են ունեցել Ռուսաստանի և Չինաստանի գագաթնաժողովները, իսկ Եվրամիությունը և ԱՄՆ-ն շարունակաբար խոսում են Կենտրոնական Ասիայի երկրների հետ կապերի ամրապնդման մասին[1]: Ինչո՞ւ է այս տարածաշրջանը դարձել «կովախնձոր» համաշխարհային տնտեսական գերտերությունների համար, արդյո՞ք տարածաշրջանի երկրները կկարողանան շահող դուրս գալ ստեղծված իրավիճակից, և ի՞նչ պետք է ակնկալել հետագա զարգացումներից:

Կենտրոնական Ասիայի երկրների աճող կարևորության մասին է վկայում վերջիններիս արտաքին առևտրի շարժընթացը: Չինաստանն այստեղ առաջատար է դարձել 2022 թվականին. Կենտրոնական Ասիայի հետ վերջինիս ապրանքաշրջանառությունը 2021 թվականի համեմատությամբ գրեթե կրկնապատկվել է՝ հատելով 70 միլիարդ ԱՄՆ դոլարի շեմը:

[1] Почему Россия уступает позиции в Центральной Азии Китай и Евросоюз одновременно провели мероприятия со странами региона, 21.05.2023, https://www.rbc.ru/politics/21/05/2023/64677fc49a79472fac8cab00?from=article_body analit01.php



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Համաշխարհային առևտրի դերակատարների՝ Կենտրոնական Ասիայի հետ առևտրաշրջանառության ծավալը[2]

Եվրամիությունը նույնպես ցույց է տալիս նմանատիպ շարժընթաց. նույն ժամանակահատվածում Կենտրոնական Ասիայի հետ վերջինիս առևտրաշրջանառությունը 27 միլիարդից հասել է 47 միլիարդ ԱՄՆ դոլարի: Տարածաշրջանի արտաքին առևտրային գործընկերների շարքում երրորդ տեղում Ռուսաստանն է, որի առևտուրը տարածաշրջանի հետ տարվա ընթացքում ավելացել է 6 մլրդ-ով՝ կազմելով 42 մլրդ ԱՄՆ դոլար: Մինչդեռ ԱՄՆ-ի առևտրաշրջանառությունը Կենտրոնական Ասիայի հետ ավելացրել է 1 մլրդ ԱՄՆ դոլարով, ու դա շարունակում է շուրջ 10 անգամ զիջել Ռուսաստանի և 15 անգամ՝ Չինաստանի հետ այս երկրների խմբի առևտրաշրջանառությանը:

2022 թ.-ի վերջին Կենտրոնական Ասիայի հինգ երկրում Չինաստանի ուղղակի ներդրումները հասել են գրեթե 15 միլիարդ ԱՄՆ դոլարի:

Չինաստանը և տարածաշրջանի երկրները համագործակցության մի շարք նախագծեր են սկսել այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են նավթի և գազի հայտնաբերումը, վերամշակումն ու արտադրությունը, տեղեկատվության, կապի և թվային տեխնոլոգիաների բնագավառները:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Կենտրոնական Ասիայի երկրների՝ Չինաստանի հետ առևտրաշրջանառության ծավալը[3]

[2] Как Китай обгоняет Россию в торговле в Центральной Азии. Инфографика, 21.05.2023, https://www.rbc.ru/economics/28/05/2023/646e43449a794715028aa655

[3] Как Китай обгоняет Россию в торговле в Центральной Азии. Инфографика, 21.05.2023, https://www.rbc.ru/economics/28/05/2023/646e43449a794715028aa655

Վկայակոչելով Չինաստանի՝ տարածաշրջանի երկրների հետ առևտրաշրջանառության ծավալները բնութագրող վիճակագրական տվյալները՝ փորձագետները Չինաստանի և Կենտրոնական Ասիայի երկրների միջև ապրանքաշրջանառությունն անվանել են պատմական առավելագույն, որը 2022 թ.-ին հասել է 70,2 միլիարդ ԱՄՆ դոլարի:

2022 թվականին Չինաստանի կողմից գյուղատնտեսական, էներգետիկ և հանքային ապրանքների ներմուծումը Կենտրոնական Ասիայի երկրներից աճել է ավելի քան 50%-ով, իսկ Չինաստանից մեխանիկական և էլեկտրոնային արտադրանքի արտահանումը՝ 42%-ով: Ընդ որում, 2023 թ.-ի առաջին չորս ամիսներին Չինաստանի արտաքին առևտուրն ավելի դինամիկ աճ է գրանցել՝ չնայած անորոշ արտաքին պահանջարկին, առևտրային ռիսկերին և այլ դժվարությունների: Չինաստանի ընդհանուր ներմուծումն ու արտահանումն աճել են 5,8%-ով և կազմել 13,32 տրլն յուան (մոտ 1,92 տրլն ԱՄՆ դոլար): Մասնավորապես՝ Կենտրոնական Ասիայի հինգ պետության՝ Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի և Ուզբեկստանի հետ երկրի առևտուրն աճել է 37,4%-ով՝ մասնակիորեն փոխհատուցելով ավանդական շուկաներում թույլ պահանջարկը:

Առևտրատնտեսական համագործակցության թեմաները, ներառյալ՝ անդրսահմանային էլեկտրոնային առևտրի զարգացման հեռանկարները, հատուկ ուշադրության են արժանացել Սիանում կայացած Կենտրոնական Ասիա-Չինաստան գագաթնաժողովի ժամանակ, որը տեղի է ունեցել 2023 թ. մայիսի 18-19[4]:

Չինացի փորձագետները կարծում են, որ պետությունների ղեկավարների հանդիպումը Սիանում, որը համարվում է Մետաքսի մեծ ճանապարհի մեկնարկային կետը, ընդգծում է Չինաստանի և Կենտրոնական Ասիայի երկրների միջև ընդհանուր շահերի առկայությունը՝ վկայելով տարածաշրջանային համագործակցության խորացման և աճող համաշխարհային տուրբուլենտության մասին[5]:

Ակնհայտ է, որ վերջին տարիներին Չինաստանը ձևավորել է իր շահերն առաջ մղելու տարբեր կառուցակարգեր և շահագրգռված է Կենտրոնական Ասիայի երկրների հետ ապրանքաշրջանառության ծավալների ընդլայնմամբ: Ելնելով այս խնդրի լուծումից՝ չինական կողմի համար զգալի հետաքրքրություն է ներկայացնում առևտրատնտեսական ոլորտում մաքսային ընթացակարգերի պարզեցումը: Գագաթնաժողովում նշվել է, որ գյուղատնտեսական և պարենային ապրանքների մաքսազերծման համար «կանաչ միջանցքների» հիմնադրումն ուղղված է նոր պայմանների ստեղծմանը՝ չինական արտադրանքն արտաքին շուկաներ հասցնելու համար:

Չինաստանը մտադիր է բեկում մտցնել տարածաշրջանի երկրների հետ տնտեսական փոխգործակցության մեջ: Դա հաստատում են Չինաստանի և տարածաշրջանի երկրների միջև ստորագրված՝ 50 միլիարդ ԱՄՆ դոլարի համաձայնագրերը. Չինաստանը 22 միլիարդ ԱՄՆ դոլարի համաձայնագրեր է ստորագրել Ղազախստանի, 15 միլիարդ ԱՄՆ դոլարի՝ Ուզբեկստանի հետ: Այս համաձայնագրերը ցույց են տալիս Չինաստանի պատրաստակամությունը՝ ամրապնդելու իր դիրքերը տարածաշրջանում[6]:

Իհարկե, այս երկրների միջև փոխգործակցությունը չէր կարող սահմանափակվել միայն տնտեսական հարաբերություններով: Ասվածի վկայությունը, թերևս, գագաթնաժողովի ժամանակ Չինաստանի և Կենտրոնական Ասիայի երկրների հայտարարությունն է առ այն, որ վերջիններս պետք է հետամուտ լինեն վճռականորեն հակազդելու արտաքին միջամտությանը տարածաշրջանի երկրների ներքին գործերին և «գունավոր հեղափոխություններ» հրահրելու փորձերին, պահպա-

[4] Объем инвестиций Китая в Центральной Азии достиг 15 млрд.долл.США к концу 2022 года – министр торговли КНР, 18.04.2023, https://www.newscentralasia.net/2023/04/18/obyem-investitsiy-kitaya-v-tsentralnoy-azii-dostig-15-mlrd-doll-ssha-k-kontsu-2022-goda-ministr-torgovli-knr/

[5] Торговля Китая с Центральной Азией стремительно растет, 10.05.2023, https://www.newscentralasia.net/2023/05/10/torgovlya-kitaya-s-tsentralnoy-aziyey-stremitelno-rastet/

[6] Новый виток геополитического соперничества в Центральной Азии, 28.05.2023, https://www.ng.ru/dipkurer/2023-05-28/11_8734_asia.html



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Կենտրոնական Ասիայի երկրների՝ Ռուսաստանի հետ առևտրաշրջանառության ծավալը[7]

նեն զրոյական հանդուրժողականություն «երեք ուժի» (ծայրահեղականություն, անջատողականություն և ահաբեկչություն) նկատմամբ, ձգտեն լուծել տարածաշրջանային անվտանգության երկընտրանքները:

Հետաքրքրական է նաև այն, որ Չինաստանն ակնկալում է Տաջիկստանում իրականացնել էլեկտրաէներգետիկ նախագծեր, մասնավորապես՝ տարբեր հզորությունների հիդրոէլեկտրակայանների կառուցում և էլեկտրահաղորդման գծերի ընդլայնում: Իր հերթին, Տաջիկստանը շահագրգռված է գազատարի կառուցմամբ, որն իր տարածքով կհասնի Չինաստան: Առայժմ բնական գազը Չինաստան է մատակարարվում Թուրքմենստանից, իսկ գազատարի երեք ճյուղերն անցնում են Ուզբեկստանով և Ղազախստանով: Չորրորդ ճյուղը նախատեսվում է անցկացնել արդեն Տաջիկստանով: Ընդ որում, վերջինիս կառուցման արդյունքում թուրքմենական գազի մատակարարումները տարեկան կարող են աճել մինչև 65 միլիարդ խորանարդ մետր:

Կենտրոնական Ասիայում Չինաստանի աճող ազդեցության հաջորդ վկայությունը Ղազախստանն է: Չինաստանն ակնկալում է ավելացնել Ղազախստանից նավթի մատակարարումները ղազախ-չինական նավթամուղով: Իր հերթին, Ղազախստանն ակնկալում է ավելացնել նավթի մատակարարումները: Սակայն, նման ծրագրերի իրականացումը կապված է արտադրությունը մեծացնելու հնարավորությունների հետ: Ոչ պակաս հավակնոտ են Ղազախստանի ծրագրերը, որը ձգտում է բազմազանեցնել ածխաջրածնային ռեսուրսների մատակարարումը գազի արդյունահանման և բնական գազի Չինաստան արտահանման ոլորտում:

Որպես վերջնական փաստաթուղթ՝ վեց երկրների ղեկավարները ստորագրել են Սիանի հռչակագիրը, համաձայն որի՝ երկրների այս խումբը պատասխանատվություն է ստանձնում աջակցել փոխադարձ ինքնիշխանությանը, անկախությանը, անվտանգությանն ու տարածքային ամբողջականությանը, վճռականորեն դեմ դուրս գալ արտաքին ուժային միջամտությանը: Այս ձևաչափով հաջորդ գագաթնաժողովը նախատեսվում է անցկացնել 2025 թվականին՝ Ղազախստանում:

Կենտրոնական Ասիայի տնտեսական նշանակությունը Չինաստանի համար հատկապես աճեց Արևմուտքից վերջինիս վրա աճող ճնշման պայմաններում: Արդյունքում, Չինաստանի համար առաջնային է դառնում իր սահմանների մոտ ոչ բարեկամ պետությունների գոտու ստեղծման կանխումը: Այս խնդիրը Չինաստանին մոտեցնում է Ռուսաստանին, որը նույնպես շահագրգռված է ոչ միայն տարածաշրջանի երկրների հետ առևտրատնտեսական

[7] Как Китай обгоняет Россию в торговле в Центральной Азии. Инфографика, 21.05.2023, https://www.rbc.ru/economics/28/05/2023/646e43449a794715028aa655

համագործակցության զարգացմամբ, այլև տարածաշրջանում արևմտյան երկրների հզորացումը թույլ չտալով:

Կենտրոնական Ասիան Ռուսաստանի համար շարունակում է մնալ որպես շախմատի դեռևս չխաղարկված խաղաքար: Ռուսաստանն անընդհատ փորձում է ուղիներ գտնել իր դիրքերը հնարավորինս շահեկան դարձնելու և այս խաղաքարը ճիշտ ժամանակին ու նպատակամետ խաղարկելու համար: Այս առումով, հետաքրքրական է, որ Սիանի գագաթնաժողովից 10 օր առաջ Կենտրոնական Ասիայի երկրների բոլոր առաջնորդները մասնակցել են Մոսկվայում տեղի ունեցած Հաղթանակի շքերթին: Ընդ որում, Ռուսաստանն իր արտաքին քաղաքականության հայեցակարգում տարածաշրջանին հատկացնում է առանցքային տեղերից մեկը:

Կենտրոնական Ասիայի հետ առաջին նման գագաթնաժողովը տեղի է ունեցել 2022 թ. հոկտեմբերի 14-ին՝ Աստանայում[8]: Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինն այնուհետ ուշադրություն է հրավիրել այն փաստի վրա, որ նույնիսկ առանց գագաթնաժողովի՝ Մոսկվան և տարածաշրջանը շատ ընդհանուր ձևաչափեր ունեն՝ ԱՊՀ, ԵԱՏՄ, ՀԱՊԿ: Ռուսաստանն ակնհայտորեն շահագրգռված է, որ Կենտրոնական Ասիայի երկրները միանան ռուսական ներմուծման փոխարինման լայնածավալ նախաձեռնություններին: Համաձայն փորձագետների գնահատումների՝ ռուսական արտահանման և ներմուծման վերակողմնորոշումը խթանում է տրանսպորտային միջանցքների զարգացումը Մեծ Եվրասիայում, և հետևաբար՝ կարևոր է վերազինել Կենտրոնական Ասիայի տարածքով անցնող անդրեվրասիական միջանցքները՝ «Արևելք-Արևմուտք», «Հյուսիս-Հարավ», «Եվրոպա-Արևմտյան Չինաստան» երթուղիները:

Կենտրոնական Ասիայում իր դիրքերն ամրապնդելու նկրտումներից չի հրաժարվում նաև Եվրոպական միությունը՝ քաջ գիտակցելով, որ չինական աճող ազդեցությունը տարածաշրջանում դերային վերաբաշխումների լուրջ ռիսկեր է առաջ բերում՝ կշեռքի նժարը թեքելով Չինաստանի կողմը:

Սիանի գագաթնաժողովին զուգահեռ, մայիսի 18-19 Ալմա Աթայում անցկացվել է ԵՄ-Կենտրոնական Ասիա երկրորդ տնտեսական համաժողովը (առաջինը հյուրընկալվել է Բիշքեկում՝ 2021 թվականին): Միջոցառումը կենտրոնացած էր երեք ուղղությամբ՝ կանաչ և թվային տնտեսություն, բիզնես միջավայրի բարելավում, առևտրի ակտիվացում: Տնտեսական համագործակցության ամրապնդումն ընդգծում է տարածաշրջանի աճող ռազմավարական նշանակությունը ԵՄ-ի համար: Միաժամանակ, անցյալ տարվա հոկտեմբերին Աստանայում կայացավ ԵՄ-ի և տարածաշրջանի երկրների գագաթնաժողովը, որտեղ վերահաստատվեց երկրների հանձնառությունը միասին աշխատելու հանուն խաղաղության, անվտանգության, ժողովրդավարության, օրենքի գերակայության և կայուն զարգացման՝ միջազգային իրավունքի լիարժեք պահպանմամբ:

Տարածաշրջանի դերակատարների շարքում չպետք է մոռանալ ԱՄՆ-ին, որը կյանքի է կոչում փոխգործակցության սեփական ձևաչափը, ըստ որի՝ ընդհանուր նպատակը մեկն է՝ անկախ, բարգավաճ և ապահով Կենտրոնական Ասիա, որտեղ առաջացած խնդիրները լուծվում են ԱՄՆ-ի հետ գործընկերությամբ: Ձևաչափն ընդգրկում է երեք ոլորտ՝ տնտեսություն, էներգետիկա և շրջակա միջավայր ու անվտանգություն: 2021 թվականից ի վեր այս շրջանակում անցկացվել են հինգ նախարարական հանդիպումներ: Վերջինը տեղի է ունեցել 2023 թվականի փետրվարին՝ Աստանայում: Հիմնական նպատակն էր ցույց տալ, որ ուկրաինական հակամարտության համապատկերում ԱՄՆ-ը վստահելի գործընկեր է, որն ուղիներ է փնտրում Կենտրոնական Ասիայի երկրների տնտեսությունների դժվարությունները հաղթահարելու համար:

Ամփոփելով փորձենք հասկանալ, թե ինչպես է տարածաշրջանում նախկին գլխավոր դերակատար Ռուսաստանն արձագանքում տեղի ունեցող այս դերային վերաբաշխումներին:

Թեև ՌԴ ԱԳՆ-ն բազմիցս հայտարարել է, որ Ռուսաստանը դրականորեն է վերաբերվում հատկապես բարեկամ երկրնե-

[8] Саммит Россия – Центральная Азия, 24.11.2022, http://kremlin.ru/events/president/news/69598

րի՝ Չինաստանի և Կենտրոնական Ասիայի միջև հավասար, փոխշահավետ համագործակցության զարգացմանը՝ ոլորտային համագործակցության ամրապնդումը դիտարկելով որպես տարածաշրջանում կայունության պահպանման և տնտեսական աճի խթանման գործոն, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ Ռուսաստանի դիրքը տարածաշրջանում աստիճանաբար թուլանում է, նույնիսկ այնքան, որ վերջինս չի թաքցնում իր մտահոգությունն այս հարցում: Չինաստանի՝ Կենտրոնական Ասիայի պետությունների հետ համագործակցությունը զարգացնելու մոտեցումներն ընդգծված կերպով հակադրվում են Միացյալ Նահանգների և նրա դաշնակիցների քաղաքականությանը, որոնք տարածաշրջանի երկրների հետ փոխգործակցությունը, առաջին հերթին, դիտարկում են հակառուսական և հակաչինական օրակարգերի խթանման տեսանկյունից:

Թեև, ընդհանուր առմամբ, Ռուսաստանի համար առաջնայինն այն է, որ գործընկերներ երկրները շարունակեն կատարել իրենց պարտավորությունները երկկողմ ձևաչափերում և ինտեգրացիոն կառույցների (ԱՊՀ, ԵԱՏՄ, ՀԱՊԿ) շրջանակում, այնուամենայնիվ, տարածաշրջանում դիրքի թուլացումը վկայում է վերջինիս համաշխարհային դերի անկման մասին: Ավանդաբար լինելով ՌԴ-ից կախված տարածաշրջան՝ Կենտրոնական Ասիան այժմ գտել է հենման նոր կետ՝ ի դեմս Չինաստանի, որն այս երկրների համար առաջընթացի նոր նախադրյալներ է ձևավորում:

Ռուսաստանի հիմնական մտահոգությունն այս տարածաշրջանում առնչվում է Արևմուտքի պատժամիջոցներին: Թեև միակողմանի տնտեսական սահմանափակումների անընդունելիության և ոչ լեգիտիմության վերաբերյալ դիրքորոշումների ներկայացմանը, Կենտրոնական Ասիայի մի շարք երկրներ, այնուամենայնիվ, չեն ցանկանում ստանձնել պատժամիջոցների ալիքի տակ հայտնվելու ռիսկերը և ազդարարում են իրենց պատրաստակամությունը՝ հետևելու արևմտյան սահմանափակումներին: Այս ամենին ի պատասխան՝ ռուսական կողմն ակնարկում է, որ Ռուսաստանի հետ կապերի խզումն այս երկրների համար անչափ ավելի մեծ կորուստների կարող է հանգեցնել, քան արևմտյան պատժամիջոցները:

Արդյունքում՝ Կենտրոնական Ասիայի երկրները կանգնած են ընտրության առաջ. մի կողմից՝ շարունակաբար նվազում է ռուսաստանյան քաղաքականության նկատմամբ վստահությունը, մյուս կողմից՝ ռուսական բիզնեսի ներկայությունն այս երկրներում ենթակա է սահմանափակումների՝ կապված Արևմուտքի դիրքորոշման հետ:

Այսպիսով՝ հիմնական շահող կողմը Չինաստանն է, որն այս իրավիճակում միանգամայն հասկանալի հարձակողական քաղաքականություն է վարում՝ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծի հռչակումից տասը տարի անց փորձելով ավելի խոր ներթափանցել Կենտրոնական Ասիա՝ ձևավորելով համագործակցության նոր մատրից, որտեղ տարածաշրջանի երկրները դիտարկվում են որպես ամբողջություն:

Հետաքրքրական է նաև ռուսական և չինական կողմերի մոտեցումների տարբերությունը: Չինաստանը խուսափում է Կենտրոնական Ասիայի երկրներին վերջնագիր ներկայացնելու գաղափարից, այն պարագայում, երբ Ռուսաստանը պարբերաբար փորձում է շեշտել իրենից Կենտրոնական Ասիայի կախվածության հանգամանքը: Այսպիսով՝ կարող ենք հավաստել, որ Կենտրոնական Ասիան կանգնած է պատմական երկընտրանքի, նույնիսկ՝ «քառընտրանքի» առաջ, և յուրաքանչյուր ընտրություն նոր ռիսկեր ու հնարավորություններ կարող է առաջ բերել այս երկրների համար: Իհարկե, լավագույն տարբերակը կլիներ այս ուժերը հավասարակշռելը, սակայն, հաշվի առնելով հակադիր բևեռների առկայությունը, դժվար է գործնականում պատկերացնել նման հնարավորության դրսևորումը: Այնուամենայնիվ, աշխարհաքաղաքական իրադրության փոփոխությունն ու փոխադարձ շահերն այս տարածաշրջանին թելադրում են կատարել վերջնական ընտրություն: Իսկ թե որքանով ճիշտ, արդյունավետ, խելամիտ և նպատակահարմար կլինի դա, ցույց կտա դեպքերի հետագա զարգացումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Как Китай обгоняет Россию в торговле в Центральной Азии. Инфографика, 21. 05. 2023, https://www.rbc.ru/economics/28/05/2023/646e43449a794715028aa655
2. Новый виток геополитического соперничества в Центральной Азии, 28. 05. 2023, https://www.ng.ru/dipkurer/2023-05-28/11_8734_asia.html
3. Объем инвестиций Китая в Центральной Азии достиг 15 млрд.долл.США к концу 2022 года – министр торговли КНР, 18.04.2023, https://www.newscentralasia.net/2023/04/18/obyem-investitsiy-kitaya-v-tsentralnoy-azii-dostig-15-mlrd-doll-ssha-k-kontsu-2022-goda-ministr-torgovli-knr/
4. Почему Россия уступает позиции в Центральной Азии Китай и Евросоюз одновременно провели мероприятия со странами региона,21. 05. 2023, https://www.rbc.ru/politics/21/05/2023/64677fc49a79472fac8cab00?from=article_body
5. Саммит Россия – Центральная Азия, 24. 11. 2022, http://kremlin.ru/events/president/news/69598
6. Торговля Китая с Центральной Азией стремительно растет, 10. 05. 2023, https://www.newscentralasia.net/2023/05/10/torgovlya-kitaya-s-tsentralnoy-aziyey-stremitelno-rastet/

Нарине ПЕТРОСЯН
Аспирант, АГЭУ

ГЕОЭКОНОМИЧЕСКАЯ ХРОНИКА

ПЕРЕРАСПРЕДЕЛЕНИЕ РОЛЕЙ В ЦЕНТРАЛЬНОЙ АЗИИ: ЧТО ОЖИДАТЬ?

Борьба за гегемонию между глобальными экономическими «гигантами» продолжает расширять свои масштабы, выражаясь также в амбициозных стремлениях получить контроль над отдельными группами стран и регионов. Начиная с 2022 года интерес к Центральной Азии значительно вырос ввиду эскалации российско-украинского конфликта. Только за последние полгода состоялись саммиты России и Китая со странами региона, а Евросоюз и США постоянно говорят об укреплении связей со странами Центральной Азии. Почему этот регион стал яблоком раздора для мировых экономических сверхдержав, смогут ли страны этого региона выйти победителями из сложившейся ситуации и чего нам ждать от развития событий в будущем?

Ключевые слова: *гегемония, международная торговля, перераспределение, торгово-экономическое сотрудничество, актор*

Narine PETROSYAN
PhD Student, ASUE

GEOECONOMIC CHRONICLE

REDISTRIBUTION OF ROLES IN CENTRAL ASIA: WHAT TO EXPECT?

The struggle for hegemony among the global economic "giants" continues to expand its scope, as they express their aspirations to gain control over certain groups of countries and regions. Since 2022, interest in Central Asia has grown significantly due to the escalation of the Russian-Ukrainian conflict. Over the past six months alone, Russia and China have held summits with the countries of the region, and the European Union and the United States are constantly talking about strengthening ties with the countries of Central Asia. Why has this region become a bone of contention for the world's economic superpowers, will the countries of this region be able to emerge victorious from the current situation and what can we expect from the developments in the future?

Keywords: *hegemony, international trade, redistribution, trade and economic cooperation, actor*